

# ԴԱԴԱՐԵՑՐԵՔ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱՌԱՆՑ ՎԱԽԻ
ԱՌԱՆՑ
ԲՌՆՈՒԹՅԱՆ

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

## ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ
## ԳՈՐԾԻՔ՝ ՎԵՐՋ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆԸ

Ի՞նչպիսի փոփոխություններ կբերի Կոնվենցիան կանանց կյանքում
Սույն Կոնվենցիան վավերացնելով, պետությունները պարտավորություն կստանձնեն իրենց օրենսդրությունը փոխելու, գործնական քայլեր ձեռնարկելու և ռեսուրսներ տրամադրելու համար՝ անհանդուրժողականության գոտիներ ստեղծելով կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ մղվող պայքարում: Ավելի կոնկրետ, Կոնվենցիան պետություններին կոչ է անում.

- Զոհերի համար ապահովել անվտանգություն և աջակցություն՝ վերակառուցելու իրենց կյանքը.
  - անվճար տրամադրել շուրջօրյա համապետական թեժ գիծ
  - տրամադրել բավարար քանակի ապաստարաններ
  - տրամադրել բժշկական, հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն
  - օգնել բնակարանային և ֆինանսական հարցերում
  - աջակցել աշխատանք գտնելու գործում

- Պաշտպանել զոհերին ռիսկերից ներդնելով.
  - արտակարգ արգելակող միջոցներ
  - սահմանափակող և պաշտպանիչ միջոցներ
  - ռիսկի գնահատում և ռիսկի կառավարում

- Իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ.
  - լուծելու համար կանանց նկատմամբ բռնության արմատական խնդիրը՝ անհավասարությունը և խտրականությունը
  - փոխելու համար վերաբերմունքը, գենդերային դերերը և կարծրատիպերը՝ այդ թվում և համագործակցելով լրատվամիջոցների և մասնավոր հատվածի հետ
  - ընդլայնելու համար կանանց իրավունքներն ու հնարավորությունները
  - ներգրավելու համար տղամարդկանց և տղաներին
  - աջակցելու համար ՀԿ - ներին և նրանց գործունեությանը՝ բռնության զոհերին տրամադրվող ծառայությունների համար

**Աջակցեք Ստամբուլյան կոնվենցիայի վավերացմանը.**
**www.coe.int/conventionviolence**